

ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑԸ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԵՎ զՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ ՄԱՍԻՆ

Ստ. Մալխասյանցի բոլոր աշխատություններում, այդ թվում և թարգմանությունների մեջ, գերակա են գիտական սկզբունքայնությունն ու ճշգրտությունը, և այդ համգամանքի բերումով էլ ցանկացած, նույնիսկ ամենափոքր ծավալով գործերը, լինելով միանգամայն հավաստի, բանասիրական կարևոր արժեք են ձեռք բերում: Ահա հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակի առիթով «Մշակում» լույս ընծայված «Ազգային մեծ հոբելյանը» վերտառությամբ նյութն էլ ոչ թե պարզապես լրագրային հոդված կամ «հոբելյանական դրվատ» է, այլ լուրջ ուսումնասիրություն, որում առաջ քաշված մի շարք հարցադրումներ, և դրանց բացահայտումները թերևս առաջին անգամ պիտի հնչեին հայ իրականության մեջ:

Կարճառոտ մուտքից հետո Մալխասյանցն անդրադառնում է գրերի ի հայտ գալու պատմական հետմախորքին: Հեղինակն արձանագրում է, որ «մինչև հինգերորդ դարի սկիզբը, երբ հնարվեց հայերեն այբուբենը, հայերը ունեցել են ավելի քան 1000 տարվա պատմական կյանք, և այս շրջանում է, որ նրանց քաղաքական նշանակությունը, իբրև մի կազմակերպված և հզոր պետության, իր գագաթնակետին է հասել: Բայց չնայելով սրան՝ հայերի մեջ չէր զգացվել կարիք սեփական այբուբեն ունենալու»: Ասվածին ավելանում են հեղինակի այն պնդումները, որ Հայաստանի մերձավոր ու հեռավոր հարևանները, պետություններ, որոնց հետ թե քաղաքական, թե նշակութային շփումները մշտական բնույթ էին կրում, բոլորն էլ ունեցել են իրենց գիրն ու դպրությունը, ուստի ինչքանով է բնական, որ ազատ և հոգեբուխ ստեղծագործ կյանքի համար առավել բարենպաստ պայմաններում հայերը ձեռնամուխ չեղան գրերի ստեղծմանը, այլ դրան անդրադարձան լոկ օտար բռնապետությունների տիրապետության ժամանակաշրջանում: Հեղինակի համոզմամբ՝ անհրաժեշտաբար ինչ-որ նոր համգամանք պիտի երևան եկած լիներ, և, ինչպես գտնում է ինքը, դա նոր կրոնն էր՝ քրիստոնեությունը:

Ի տարբերություն Հռոմի և Բյուզանդիայի, ուր ժողովրդական ստորին խավերից սկիզբ առավ քրիստոնեության ալիքը և այնքան տարածվեց ու արմատացավ, որ վերջապես կայսրերն էլ ստիպված եղան ընդունել և հովանավորել նոր կրոնը, Հայաստանում քրիստոնեությունը պարտադրվեց «վերևից»՝ արքայական պալատից, ուստի ընդվզեցին և ժողովուրդը, և ազնվականություն մեծագույն մասը: Մալխասյանցը հարևանցի անդրադառնում է Հայաստանում

«քրիստոնեության լինել թե չլինելու հարցը» վճռող դեպքերին՝ նկատելով, որ, ասենք, «Լուսավորչի ազգատոհմը, մի քանի սերունդ, բռնի մահվան կամ մահափորձի է ենթարկվել»՝ հանուն կրոնի մղված անհաշտ պայքարի ընթացքում: Բնական է, որ բռնություններից զերծ չէին կարող մնալ նաև քրիստոնեություն տարածողները, որոնք, սակայն, գործադրում էին «նաև խաղաղ միջոցներ»: Վերջիններս գիտակցում էին, որ ասորերեն և հունարեն արարողությունների միջոցով դժվար է դրական շոշափելի արդյունքի հասնելը, ուստի՝ շատ շուտ զգացվեց շրջիկ քարոզիչների անհրաժեշտությունը, որոնք կարող էին անցնել գավառից գավառ և ժողովրդին քարոզել հայերենով՝ Զրիստոսի խոսքը մատուցելով ու բացատրելով հասանելի և հասկանալի կերպով:

Տարոնի Զացեկաց գյուղում ծնված Մաշտոցը, մանկուց հմտանալով ասորերենի և հունարենի մեջ, արքունի և զինվորական ծառայությունից հետո դառնում է կրոնավոր և աշակերտներ հավաքելով՝ սկսում այցելել հեռավոր բնակավայրերը՝ քրիստոնեական ուսմունքը տարածելու նպատակադրությամբ: Որպես կանոն, դրանք հատկապես այն վայրերն էին, ուր առավել խորն էին հեթանոսության արմատները: Լեզվական իր հմտությունները կիրառելով՝ Մաշտոցը նախ՝ Ս. Գիրքն ընթերցում էր ժողովյալների համար, իսկ հետո՝ անմիջապես թարգմանում, և նկատելի էր, որ քրիստոնեության տարածման հիմնական խոչընդոտը հունարենով և ասորերենով անհասկանալի արարողություններն էին, որ և չէին կարող փոխարինվել հայերենով: Եթե հնարավոր լիներ այդ անել «Շատ լավ կլիներ, բայց ո՞ր էր հայերեն ս. Գիրք ու Պատարագամատույց, ոչ միայն գրքեր չկան, չկան նաև գրեր»՝ հայերեն գրելու համար»: Այս հանգամանքը, որ բնականաբար պիտի հուզեր ժամանակի առաջադեմ մտավորականին, երկար ժամանակ համգիստ պիտի չտար Մաշտոցին, որ վերջապես պետք է գար էջմիածին՝ իր մտահոգությունը կիսելու կաթողիկոս Ասիակ Պարթևի հետ: Զուրախություն իրեն՝ Մաշտոցը պիտի պարզեր, որ կաթողիկոսը ևս մտահոգ էր հայոց գրերի հարցով և հասցրել էր այդ խնդիրը քննարկել Վռամշապուհ արքայի հետ: Կորյուն վարդապետը մեզ է ավանդել պալատական Վահրիճի միջոցով Դանիելյան նշանագրերի բերվելը, և թե ինչպես մոտ երկու տարի Մաշտոցն իր աշակերտների հետ կիրառել է այդ գրերը, մինչև վերջնականապես համոզվել է, որ Դանիելյան նշանագրերն ի գործու չեն կատարելապես արտահայտելու մեր լեզվի ամբողջ հարստությունը: Բայց, ինչպես նշում է Մալխասյանցը, «Մեսրոպ չէ հուսահատվում, սկսած գործը չէ լքանում»: Նա մեկնում է Ասորիք, լինում տարբեր քաղաքներում, իր հետ ժամանած աշակերտներին ուղարկում հմտանալու ասորական և հունական դպրության մեջ: Ինքն անծամբ դիմում է հմուտ մարդկանց խորհրդին, բայց շոշափելի որևէ օգնություն չի ստանում: Մեկամյա համառ որոնումներից հետո

մի տեսիլով Մաշտոցին երևում է մի աջ ձեռք, որ քարի վրա գրում է հայոց այբուբենը: Սթափված Մաշտոցն ամմիջապես գրի է առնում իր հիշած նշանները, անվանում ու դասավորում է դրանք և մեկնում Սամոսատ՝ հույն գիտնական և գեղագիր Յոդփանոսի մոտ, որի հետ էլ վերջնական տեսքի է բերում այբուբենը:

Մալխասյանցն անդրադառնում է նաև Մեսրոպի ու նրա երկու ավագ աշակերտների կողմից գրառված առաջին հայերեն նախադասությամբ, որի շնորհիվ նրանք ականատես են լինում, որ բաղձալի երազանքն արդեն իրականություն է, և ներկա այբուբենով կարող են արտահայտել հայերեն «ամեն բառ, ամեն հնչյուն»:

Շարունակելի մյուսերի հերթական հոդվածն ավարտելով Մաշտոցի Յայաստան վերադարձով և համազգային խնդրության նկարագրությամբ՝ Մալխասյանցը մյուս հատվածն արդեն սկսում է հետևյալ հարցադրմամբ. «Սկզբից տարօրինակ է թվում, որ 36 գրից բաղկացած մի այբուբեն, որը երկու տողում կարելի է տեղավորել, հնարելու և գրելու համար՝ հարկավոր լինի այսքան աշխատանք և ժամանակ, մանավանդ որ... ս. Մեսրոպ ամենեւին չէ քաշվել օտար այբուբեններից փոխ առնել այս ու այն գրի ձևը: Ուրեմն ի՞նչն էր նրա աշխատեցնողը»: Մալխասյանցը նախ՝ անդրադառնում է Դանիելյան կամ նախամաշտոցյան հայ գրերի հարցին: Չարմանք է հայտնում այն առնչությամբ, թե գոյություն է ունեցել հայկական այբուբեն, սակայն նրանով ոչ մի հիշատակարան, դրան կամ արձանագրություն չի պահպանվել: Հետևողականորեն իր խոսքն առաջ տանելով՝ տարբեր հիմնավորումներով հանգում է այն կարծիքին, որ, ըստ երևույթին, Դանիելի մոտ պահպանված նշանագրերը «արամեական» և «արմենական» բառերի նմանության հետևանքով շփոթության պատճառ են դարձել, որ և Մաշտոցը երկու տարի ստիպված է եղել աշխատել այդ նշանագրերի վրա՝ վերջնականապես համոզվելով, որ դրանք կիրառելի չեն: Բնականաբար, ուրիշ ելք էր հարկավոր որոնել, որի վերաբերյալ Մալխասյանցը դատում է հետևյալ կերպ. «Վերցնենք առաջին, տարրական հարցը, որին պետք է պատասխաներ ս. Մեսրոպ.- բանի՞ հնչյուն ունի հայերենը: Նա այս չգիտեր սկզբում, և չիմացավ նաև գրերը գտնելուց հետո: Մենք այժմ էլ չգիտենք. գիտենք միայն, որ մեր լեզուն, ինչպես ուրիշ լեզուներ, ունի ավելի քան 300 հնչյուն»: Մալխասյանցը փորձում է ասվածն ամմիջապես հաստատել ակնառու օրինակներով և հավելում, որ Մաշտոցը, հավանորեն, «կաշկանդված» էր հունական և ասորական այբուբենների նշանների քանակով, կամ «բարեբախտաբար չուներ... նուրբ խողովություն», այլապես մեզ կավանդեր ոչ թե 36 նշանագիր, այլ մի քանի հարյուր: Հնչյուն ասելով՝ գիտնականն ակներևաբար նկատի է ունեցել այն, ինչ այսօրվա տերմինաբանությամբ հնչույթ է անվանվում:

Մալխասյանցի համոզմամբ՝ երկար որոնումներից հետո Մաշտոցը որոշել է ի նկատի ունենալ միայն հիմնական հնչյունները, քայք դրանց քանակի հարցը պետք է լուծվեր առավել մանրակրկիտ պրպտումներից հետո: Դժվարություն են ներկայացրել նաև հայերենի բարբառների հնչյունական, բառի հոլովված կամ խոնարհված ձևերի տարբերությունները և, վերջապես, գրության ձևը՝ ծախից աջ, թե՛ աջից ձախ: Այս վերջինը Մալխասյանցը համարում է ոչ այնքան դժվար, որքան կարևոր. «...եվրոպակա՞ն քաղաքակրթության պետք է հետևի հայը իր գրականությամբ, թե՞ ասիականին»: Եվ այստեղ Մալխասյանցը չի խորշում իր հուզմունքն արտահայտելուց. «Օրհնելու է այն ժամը, երբ ս. Մեսրոպ վճռեց... հետևել հունական սիստեմին, որ ընդունված է բոլոր եվրոպական այբուբենների մեջ, և ոչ ասորականին, որին նմանում է այսօր պարսկական-թյուրքական-արաբական անհարմար այբուբենը»:

Հոգվածաշարի հինգերորդ նյութը Մալխասյանցը նվիրել է հունական և ասորական այբուբենների հետ հնարավոր առնչություններին՝ խոսքն սկսելով Կորյունի և Խորենացու՝ «Մեսրոպը, Հռուփանոսի հետ միասին, «հանդիպեցնում էր» հայերեն նշանագրերը հունականին» հիշատակությունից: Այս հատվածում Մալխասյանցը, ինչպես ինքն է ասում, իրեն թույլ է տվել մի փոքր շեղում՝ Դ և Է գրերի բուն նախնական հնչյունը որոշելու նպատակով: Գիտնականի համար երկու դեպքում էլ ելակետային նշանակություն ունի այն հանգամանքը, որ հունական և հայկական այբուբենները համապատասխանաբար զուգադրվել են, ուստի նայելով երկու նշանների հունարեն համարժեքներին՝ կարելի է նկատել, որ դրանք այլ հնչում են ունեցել: Մալխասյանցը լիակատար վստահության համար բերում է համապատասխան օրինակներ, համադրում այլ լեզուների հետ:

Արդեն վեցերորդ հատվածում հայագետն անդրադառնում է Մեսրոպ Մաշտոցի «փոխառություններին», մատնանշում, թե որ նշանն է փոխառվել հունարենից, որը՝ զենդականից, որը՝ ասորական էստրանգելոյից և այլն: Հենց հողվածի սկզբում Մալխասյանցը «փոխառության» կապակցությամբ հետևյալ համոզմունքն է հայտնում. «Այս երևույթը սովոր պիտի ձգեր ս. Մեսրոպի վրա, եթե կարծեինք, թե նրա՝ այբուբենի վրա կատարած աշխատությունը կայանալիս է եղել հնչյունների համար այս կամ այն գիրը զծագրելու մեջ»: